

## Ի՞նչ է ՀԱՅՈ

Հայ ըլլալ կը նշանակէ բազմաթիւ լեզուներ խօսիլ, սակայն ո՛չ մէկ լեզու, եւ յարկապէս հայերէնը, լաւ գիտնալ:

Հայ ըլլալ կը նշանակէ մէկ տեղ մը ծնիլ, ուրիշ քաղաք մը ապրիլ, տարբեր տեղ մը մեռնիլ եւ չորրորդ երկիր մը թաղուիլ:

Հայ ըլլալ կը նշանակէ յարաբերիլ նաեւ մարդոց հետ որոնց երեսին անգամ պիտի չուզէիք նայիլ՝ եթէ հայ եղած չըլլայիք:

Հայ ըլլալ կը նշանակէ խոր գիշերուան քունին մէջ հեռաձայնին վանգը լսելով արթննալ եւ հեռախօսին ընկալուչէն լսել անձանօթ հայ մը որ շատ անկարել որ խնդիրի մը հանար գլուխ կը տանի:

Հայ ըլլալ կը նշանակէ, անաստուած ըլլալու պարագային ալ, եկեղեցի յաճախել եւ հետեւիլ կրօնական արարողութեանց:

Հայ ըլլալ կը նշանակէ, քաղաքի մը միակ հայ բնակիչն ըլլալու պարագային, անպայման ուրիշ հայ մը հանդիպելու փափաքն ունենալ:

Հայ ըլլալ կը նշանակէ, քաղաքի մը երկու միակ հայ բնակիչներէն մին ըլլալու պարագային՝ միւս հայուն հետ ամէն կապ խզած ըլլալ:

Հայ ըլլալ կը նշանակէ ըլլալ առեւտրական, կամ ոսկերիչ, կամ գիտնական, կամ բժիշկ, կամ լուսանկարիչ, կամ ճարտարապետ եւ կամ ալ համակարգիչի մասնագէտ:

Հայ ըլլալ կը նշանակէ՝ Եւրոպական ամենաշքեղ ճաշարանին ճաշերուն չհաւնիլ որովհետեւ ճաշացանկին մէջ տու՛մայ եւ խորոված չկայ:

Հայ ըլլալ կը նշանակէ բան մը գնել ոչ թէ իրական պահանջի մը գոհացում տալու՝ այլ ուրիշ հայու մը ճաթեցնելու համար:

Հայ ըլլալ կը նշանակէ խոնարհ ըլլալ օտարներուն հանդէպ եւ գոռոպ ազգակիցներուն հանդէպ:

Հայ ըլլալ կը նշանակէ աչքաբաց ըլլալ առեւտուրի մէջ, եւ միամիտ՝ քաղաքականութեան մէջ:

Հայ ըլլալ կը նշանակէ բնա՛ւ չտեսած Հայրենիքի մը կարօտով ապրիլ, բայց այնտեղ հաստատուելէ խուսափիլ:

Հայ ըլլալ կը նշանակէ թէ ոեւէ ուրիշ հայու մը ծանօթանալու առթիւ պիտի իմանանք թէ այս ազգակիցին նախնիքներէն մին եղած է Պարսից արքունիքին բժիշկը, կամ

Օսմանեան սուլթաններու պալատին ոսկերիչը եւ կամ ալ Ռուսիոյ ձարին թիկնապահ գունդին հրամանատարը:

Հայ ըլլալ կը նշանակէ թէ ոեւէ ուրիշ հայու մը ծանօթանալու առթիւ պիտի իմանանք թէ այս ակազակիցին նախնիքները քանի մը նահանգի փարածութեամբ կալուածներ ունէին Օսմանեան Կայսրութեան մէջ. իսկ իր ընտանեկան հին ծանօթէ մը պիտի իմանանք թէ այս նախնիքները ո՛չ թէ կալուածատէր՝ այլ աղքատաբէն էին:

Հայ ըլլալ կը նշանակէ Հայրենիքի կարօտն այնքան աւելի պոռալ՝ որքան աւելի կը շարժուի Հայրենիքէն հեռաւորութիւնը:

Հայ ըլլալ կը նշանակէ եօթ միլիոն անձ ըլլալ եւ եօթ միլիոն կուսակցութիւն:

Հայ ըլլալ կը նշանակէ թէ նոյն անձը հայկական միութեան մը նախագահն է, ուրիշի մը քարտուղարը, երրորդի մը խորհրդականը եւ չորրորդի մը՝ համակիրը:

Հայ ըլլալ կը նշանակէ ողբալ հայերէն լեզուի նահանջին համար, բայց փան մէջ օտար լեզուով խօսիլ:

Հայ ըլլալ կը նշանակէ բարձրաստիճան օտարի մը ծանօթանալու առիթով իրմէ իմանալ վկայեալ «խիար»-ի համբաւ վայելող, եւ ոչ մէկ պաշտօնական հանգամանք ունեցող, հայ մը այդ օտարին ներկայացած է իբրեւ հայ համայնքի նախագահ:

Հայ ըլլալ կը նշանակէ, օտարներու համեմատութեամբ, երկու անգամ փոքրեր վճարել՝ մէկը բնական վայրի պետութեան, իսկ միւսը՝ պանապան հայկական միութիւններու, կազմակերպութիւններու կամ ձեռնարկներու նպաստելու համար:

Հայ ըլլալ կը նշանակէ ընկերային դիրքով բարձրանալուն վուզահեռ՝ հայութիւնը մոռնալ, բախց վայն վերջիչել ծերութեան հասնելէ, կամ ընկերային դիրքը կորսնցնելէ յետոյ:

Հայ ըլլալ կը նշանակէ աստիճանով բնա՛ւ հեղափոխութեամբ չըլլալով հանդերձ, աստիճանաշրջանութեան վերաբերող դժուարամարս գիրքեր կարդալ՝ անոնց մէջ հայու մը անունին հանդիպելու հաճոյքը վզալու համար:

Հայ ըլլալ կը նշանակէ ամենաուրախալի եւ ամենապուարճալի հաւաքոյթի մը ընթացքին՝ պահ մը լռութիւն պարտադրել մեր մեռելները յիշելու համար:

Հայ ըլլալ կը նշանակէ օտար լեզուով խօսիլ, հայերէն աղօթել եւ թրքերէն հայհոյել:

Մի հարուած “Հայկական Զայն” թերթից...